

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք)



ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐԲԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

Գիրք Վաստակոց կը խօսի մշակութեան վրայ, — երկիրը գործելուն և խնամելուն, բուսական ընդարձակ ծրագրով: Այս գործը՝ որ զանազան գիտնականներէ խմբագրութիւն մըն է, իր ներկայ ձեւը՝ ըստ հաւանականագոյն կարծեաց, կը պարտի Անտոլ Պերիթացոյն որ կ'ապրէր Գ. դարուն մեր թուականին:

Երկրավաստակին, — այսպէս ալ կը կոչուի մեր մէջ ինչ որ ուրիշ ազգեր Geoponicon կ'ըսեն, հայերէն թարգմանութիւն մը հասած է մեզի, որուն վրայ տեղեկութիւններ կը պակսին: Հրատարակիչը, Հ. Ալիշան, յառաջարանին մէջ փորձած է քանի մը ծանօթութիւններ տալ, զոր ամբողջապէս հոս մէջ կը բերենք կարեւոր ըլլալով նաեւ մեր խնդրին:

« Բովանդակ մատեան հայ թարգմանութեանս՝ իրրեւ չորիւր լոկով մասամբ չափ նուազ է քան գյուճականն. թերեւս ոչ շատ ինչ աւելի ունէր և օրինակն՝ յորմէ փոխեցաւ ի մեր լեզուս: Օրինակն այն՝ առանց երկբայութեան, էր արաբերէն թարգմանութիւն յունականին, որպէս քաջայայտ երեւի յարարիկ անուանց համաստեղութեանց, զոր մերթ թարգմանելով և մերթ ոչ՝ կրկնէ մերս, և ի բուսոց և կենդանեաց ոմանց. զորոց չէ գտեալ բնիկ հայեցի կոչմունս. ընդ որոց հարկ էր նմա գյունականն կարգել անուանս՝ եթէ ի յունէ անտի թարգմանէր. իսկ եթէ յիշէ երբէք այսպէս կամ այնպէս կոչիլ յունարէն՝ անդ Արարացի թարգմանին է քանն

զոր կրկնէ Հայն: ի թարգմանել Հայոյն առնթերակայ թուի և Արարացի լեզուագէտ, կամ երկոցուն միարան թարգմանեալ. քանզի ասէ ուրեմն (ՄԿԻ) վասն խոտոյ իրիք, « Արապկերէն ասան Պատրուճ, և մեր չկարացաց ճշմարտել ի թարգմանէն. և որք ճշմարտենն թող գրեն »: Այսպէս և այլ սակաւ ուրեք ոչ կարելով ճշմարտել՝ գրէ զարարացի անունն և դատարկ թողու ի տողին վասն գրելոյ զհայն ի ստուգելն:

Առաւել եւս բոճալի էր մեզ գիտել զբուսոյց տեղի և ժամանակ և զանձն հայերէն թարգմանչին, զոր զլանան մեզ երբքին եւս օրինակք գործոյս՝ որք ի ձեռին մերում, նորագիրք և անյիշատակք: Համարիմք յաւուրս տիրապետութեան Ռուբինեանց երկասիրեալ, և ի Կիլիկիա. քանզի թէպէտեւ ուրեք ուրեք յառաջին հեղինակէ զբոցն յիշեալ լինի աշխարհն Կիլիկեցոց (որպէս ի ՄՀԲ. ՄՀԳ. ՄՀԵ դրունս, ուր հեղինակ քանին է Ֆլորենտինոս) այլ յիշէ ի մերում թարգմանութեան և ուր չիք ի յոյն բնագրի, և ոչ իսկ թուի պատշաճել. զոր օրինակ ի դունն ՉՉ, հեղինակն որ է ինքն Անտոլ, յիշէ զԱրեւելեայս և զԻրէացիս. մերս (գլխտինդ ի Եփեսոսացիս փոխեալ) յաւելու, « Եոյնպէս և Կիլիկեցիքն աւանն ». և ի դունն ՂՁ, ի ճառեւն զխանգարելոյ այգեաց և անդոց յօդոց Ֆլասուէ, ուր և ոչ մի այլ աշխարհ կամ քաղաք յիշի, մուծանէ մերս, « եւս առաւել ի Կիլիկիոյ գաւառս »: Իսկ ժամանակ թարգմանութեան կարծեմ զԳԳ դար, վաղագոյն քան թէ անագան. զի ոչ միայն ամբոխք յետին դարու իշխանու

Թեան կիւրիկեցեաց մերոց՝ ոչ յուսացուցանեն այսպիսի մտադիւր պարապմունս գիտնականս, այլ և ոչ այսքան յստակութիւն և գիտութիւն լեզուի ակն ունելի է ի ժամանակաց՝ յորս զբեաթէ լռէ և դադարէ իսկարանութիւն հայերէն խօսից և դպրութեանց: Քանզի թէպէտեւ յաշխարհիկ բարբառ և յոճ յեղեալ են զիրքս այս, այլ չեն ինչ նուագեալ ի շնորհաց յստակութեան և սեփականութեան հայրենի լեզուի, հանդերձ զիւտով և զիստութեամբ արուեստական կամ քնախօսական բառից, որով դուն ուրեք կարօտի օտարածայն և կամուտ անուանց . և այս ոչ միայն ըզթարգմանչիս մերոյ հմտութիւն և զհետաքննութիւն ցուցանէ, այլ և զճոխութիւն և զընդարձակութիւն լեզուիս և զկանուխ ծանօթութիւն բնական և արուեստական գիտեւեաց ի Հայս, ընդ որ արժանս իսկ է մեզ ինչպալ և պարծել . և եթէ ճանաչէաք զթարգմանչին բազում երախտեաց դրուստիս և նմա մատուցանել¹ »:

Ուրեմն Հ. Աւիշան անդրադարձեր է թէ Գիրք Վաստակոց արարեռեկ թարգմանուած է, թէ կիլիկիայ մէջ թարգմանուած է, թէ հաւանօրէն թարգմանութեան ժամանակը ԺԳ դարն է, աւելի կանուխ քան ուշ, թէ թարգմանչը անձանօր է, ինչ որ ներկայ յօղուածիս նպատակն է փորձել ծանօթացնել, որով և թարգմանութեան ժամանակը աւելի որոշած կ'ըլլանք:

Հ. Ղ. Յոմեանեան (Հետազօտութիւնք Նախնեաց Ռամկօրէնի վրայ, մասն Ա. էջ 93) այս գրութեան ժամանակի մասին խօսելով կ'ըսէ. « Ուշադիր քննութեան ենթարկելով զգրուածն և բազդատելով ամենէն հին ռամկօրէն գրութեանց հետ, հաւանական կարծեօք կարող ենք հաստատել թէ հին՝ շատ հին ժամանակի գործ է, թերեւս քան զամենայն ռամկախօսս հնազոյն: Այսպէս թէպէտ Շնորհաւելոյն և առաւել ևս Հերացեոյն, ռամկական գրու-

ծոց ժամանակն որոշակի գիտցուելով, չէինք կրնար կանխագոյն քան զնոսա դասաւորել զՎաստակոց զիրքն և տալ այնմ զնախաւորութիւն ժամանակի, բայց իրաւարք տալու ենք զնախապատուութիւն լեզուի և ոճոյ՝ գոնեայ՝ ի մասին Մխիթարայ: Արդ որովհետեւ կը տեսնենք թէ ռամկօրէն գրութիւնք այնչափ աւելի իրենց գեղն ու վայելչութիւնը կը կորուսանն կամ զէթ ստորնագոյն և իստեակ կերպարանք կ'առնուն՝ որչափ աւելի յետագոյն են ժամանակաւ, ի հարկէ հետեւցնելու ենք թէ մեծ հնութիւն ունի գրութիւնս »:

Ժամանակը դեռ նոր վաւերաթուղթ մը չյայտնեց մեզի ուր նշանակուած ըլլար թարգմանչին անունը . արդ, ենթադրութեանց դիմելով՝ ջանալով որ ասոնք անհիմն չըլլան, կ'ըսենք թէ այն անծանօթը որ ԺԳ. դարէն աւելի յառաջ ըլլայ, քան պետք, կիլիկիոյ մէջ, և արարեռէն գիտցող, շատ հաւանօրէն միայն Մխիթար Հրացիւ կրնայ ըլլալ: Մխիթար թէեւ Հերծնած է, բայց իր բոլոր կեանքն ու գործունէութիւնը կիլիկիոյ մէջն է անցուցեր: Մտերիմ բարեկամն էր Ներսէս Շնորհաւի բանաստեղծ հայրապետին, որ իրեն նուիրած է Յաղագս կրկնից և զարդաց նորս և Յաղագս Աստուծոյ և արարածոց ոտանաւոր, որուն սկզբնատառերը կը կազմեն « Մխիթար բժիշկ ընկալ ի Ներսէսէ զայս բան »: Եթէ ձեռք կը զարնէ կազմելու իր Մխիթարոյրիւ չըմանցը, վասն զի իրեն զրդիչ ունէր « զսէր և զյօժարութիւն սրբոյ և աստուածապատիւ կաթողիկոսին Հայոց տեան Գրիգորի, որ մակակոչի Տղայ: Սա՛ որ էր առաջնորդ յաթոռ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց . զոր տեսի ամենայնիւ սիրող իմաստութեան և հմուտ : Եւ յաղագս այսորիկ յօժարեցի ի պէտս և ի յօգուտ սորա առնել զգիրքս զայս ի հոռոտ, յարապիկ և ի պարսիկ գրեանց, ըստ իմոյ կարողութեանս և շնորհի՛՜ զոր ետ ինձ տէր գիտութիւն լեզուաց և բոց նոցա՞ »: Եւ իրաւցնէ ինք ի մանկութենէ վարժած է « ի դպրութիւն Արարացեոց, Պարսից և Հելլենացեոց՞ »:

1. Գիրք Վաստակոց, Վենետիկ, 1877. ԺԳ-ԺԵ.
 2. Յաւադարան Նեղրեակին, սպ. Վենետ. 1832.
 3. Անդ.

Աչքի զարնող են արտաքին և ներքին այն նմանութիւնները՝ որ կան ընդմէջ վաստակոց գրքին և Միխիթարութիւն Չերմանցին: Երկուքն ալ կը վերաբերին երկրաւոր գիտութեան, որ ովասիս են մեր նախնեաց երկնաւոր գրականութեան մէջ: Ինչպէս Միխիթարոսի յիմանցին՝ ասոր ալ թարգմանիչը հոգեւորական մը դժուարաւ կրնայ ըլլալ: Երկուքն ալ արարերէնէ թարգմանուած են, թէեւ յունարէն բնագրներն ալ ըլլան: Ասկէ զատ երկուքին ալ լեզուն նոյն է: Հ. Ղ. Յովնանեան, ինչպէս վերը տեսանք, աւելի ընտիր կը գտնէ Գիրք Վաստակոցի լեզուն քան Չերմանց Միխիթարութեան. այս հանգամանքը չհակառակիր որ երկուքն ալ նոյն հեղինակէն չըլլան: Միխիթար ազէկ գրարար գիտէր, և միայն հասկցուելու համար է ընդհանուրէն՝ որ կը զիջանի ուսմպօրէն գրել: Վաստակոց գիրքը՝ ըստ իս, աւելի յառաջ երկասիրած ըլլալով քան Չերմանց միխիթարութիւնը, քիչ մ'աւելի ալ ընտիր լեզու գործածեր է, որ այսուհանդերձ աչքի զարնող մեն ջարդերութիւն մը չունի Միխիթարութիւն Չերմանցէն:

Երկայն պիտի ըլլայ խօսիլ այս կարգի բոլոր մանրամասնութեանց վրայ. պիտի շատանամ միայն քանի մը շատ աչքի զարնող կէտեր նշանակելով:

Գիրք Վաստակոց իր բաժանումները փոխանակ գրոյս կոչելու, ինչպէս որ կ'ըսենք հայերէն, դրան կ'անուանէ: Չերմանց միխիթարութիւնը իրացնէ գրոյս կը գրէ, բայց նաեւ միայն ինք է որ կը հասկնայ դրան ձայր Գիրք Վաստակոցի իմաստով: Էջ 23 կը գրէ. « Եւ բժշկեա՛ զայտոցն և զելուզն իւր բժշկեա՛նքամբն, զոր գրած է իւր դրան »: Հերացի էջ 45 կը գրէ. « Առ գառնալեզվի ջուր, և բրսի անտարի ջուր, որ յարապն հովոսի թիբ կոչեն »: Գիրք Վաստակոց շատ կը գործածէ այս անուներ. « Եւ թէ զխոտն, զոր հովոսի թիբ կոչեն, խառնես և տաս » (էջ 216): « Եւ կալամբի տերեւ ... աղով ի վերայ դիր, և հովոսի թիբ խոտ » (էջ 214): ՄՀ. էջ 87 « Ապա թէ զարդիոստէին գրոյնն Հո-

տոմ ձիրով թանայ »: Գվ. « Դեղն այս է որ զնոտմ ձերե եփեն » (էջ 71): Հայերէնի բառածեւեր ինչպէս ՄՀ. (էջ 96). « Եւ տանա (= ընտանի) աղէկուտասի »: Գվ. էջ 169 կը գրէ « Եւ վայրի սխտոր որ է սկորդոն, շատ ուժով է քան զտաւուց »: ՄՀ. էջ 14. « Ապա թէ գիտենաս որ բաղանիսն անոկեաց և զիւր անոկեաց ցուցանէ առ հիւանդն »: « Ապա, թէ դարձեալ բաղանիքն անոկե »: Այս բառը շատ սովորական է նաեւ Վաստակոց գրքին: Երկուքին մէջ այլ երբ մին հիւանդները, միւրը բոյսերը խնամելու կամ ինչպէս կ'ըսեն իրենք՝ ստածելու միջոցները պիտի աւանդեն, միշտ անկոփոխ ան ով կը սկսին և օգտակար է կամ օգտէ բառերով կ'աւարտեն:

Հոս գլուխ մը կ'օրինակեմ Վաստակոց գրքէն, որ պիտի ցուցնէ թէ ինչ աստիճան Միխիթար Հերացոյն լեզուն է:

« Եւ եթէ չուրդի կատարեալ բժիշկ, նա յայլ ցածագունից ի գիտնականացն՝ որ նախակրթեալ են ի ստածումն ալ հիւանդացն, վասն զի այնորդի՛ որք ի մի վայրի բնակեալ են՝ անկար են դարմանիլ միտպէս դարմանով, և ստողութիւն միտպէս լինել. զի նմանք լինին միմեանց զեղն և աղպէտն: Եւ պարտին դարմանողը լինել վաստակաւորաց և յառաջ քան զհիւանդանալն, զի ի տապոյ արեգական և ի սաստկութենէ ձմեռնային օրոյն վաստակաւորքն ուժգին տազնապեալ գտանին քան զայլպիսի մարդիկ: Եւ այսր աղագաւ հրամայէ որ այնպիսեացն ուտեն սակաւ լինի, և այս է նոցա լաւ: Եւ են ոմանք ի մարդկանէ որք զինի և զխոտն որ անուանի խուպայգ, եւացուցանեն զիւրեանք ընդ իրեար, և ապա յիստակեն զգինին, և զայն ջրախառնեն և խմեն վաստակաւորքն հետ աղպէտին: Եւսեւ այլ ոմանք խառնորդեն զմածունն և զլուրն և զգինին, և տան ըմպել յանօթից. և այս ի զարնանային ժամանակէն մինչեւ յաշուեն բարեոք է: Եւ ոմանք տան նոցա ըմպել օշնդրի գինի յառաջ քան զկերակուրն, և ի մէջն և յետ կերակրոցն, և թէ չուրդի

օշնդրի գինի, ա՛ռ զօշնդրն և եփե՛ ջրով, և այն ջրովն զիրեանք արբող, զայս այս-
քան պարտ է ի գործածել :

Եւ այլ . արկ զմինաստին ի քացախն
և թող ժամանակ ինչ, և զայն քացախն
տուր նոցա ուտել ի յանօթեց և յետ կե-
րակրին: Գիճային զինին և հաստն լաւ է
նոցա որ ի գիճային այգւոյն լինի քան
զչորային գինին և սուրն . և այսու ամե-
նայնի փրկին մարմինը այնպիսեաց ի վշտաց
և ի բազում ախտից . և զարեկորկոտն
լաւ է նոցա : Եւ թէ չուրդի ի գեղն քաղ-
ցրահամ և բարուր ջուր, նա բազում ախ-
տից և ցաւոց առաջը է վատթար ջուրն :
Պարտ է զայնպիսի ջուրն եփել, որ պա-
կասի ի տանն բաժնէն մէկն, և ապա պա-
ղեցնել և ըմպել : Նոյնպէս թէ զծովու
ջուրն ոք այսպէս առնէ լաւանայ և քաղ-
ցրանայ : Եւ թէ հասանի ի վաստակաւորն
ցաւ ինչ ի թիւնաւորէ ի կրքէ, եթէ տա-
նու կոր լինի և եթէ վայրի՝ նա թուրխախի
հին գինին օգտէ, և այս ապք այգի՝ զոր
թրակէին այգի կոչեն, նաև այնորիկ խա-
ղողն և չամիչն գինին և քացախն բնու-
թեամբ օգտէ : Եւ թէ այրես զհօտն և զայ-
րուցն ի վերայ խայթածին դնես՝ օգտէ .
նոյնպէս և ամենայն հօտի մոխիր օգտէ :
Այլ և կատաղի շան խածածի օգտէ » :

Յարդ ըստածներէն զատ՝ ինչ որ դեռ
համոզիչ կայ թէ Գիրք Վաստակոցը
Մխիթար Հերացւոյ թարգմանութիւն ըլ-
լայ, միջավայրն է յորում այսպիսի գործի
մը պէտքը զգալի եղած է : Մշակական
գործի մը թարգմանութեան ձեռք զարնե-
լու համար, պէտք է որ նոյն արուեստին
մեծ եռանդ մը ցոյց տրուած ըլլայ . իսկ
երկրագործութեան արուեստը միայն խա-
ղաղութեանց ժամանակ ամենէն աւելի կը
ծաղկի : Մեր կիլիկեան հարստութեան
պատմութիւնը խոր խաղաղութիւն մը կամ
զայն պահելու ապահովութիւնը՝ կը նշա-
նակէ թորոսի իշխանութենէն վերջ և մաս-
նաւորապէս Լեւոն Մեծի օրերուն : Եւ ի-
րապէս է այս ժամանակ երկրագործութիւնը
շատ կը ծաղկի կիլիկիոյ մէջ, որուն ոչ
միայն գիւղացի դասակարգը ի պաշտօնէ

կը պարապէր, այլ և վանահայրեր ու
վարդապետներ՝ իրենց մեկնողական գրիչը
թողլով, բրիչը կ'առնեն ձեռքերին, ա-
ւելի առձեռն վայելելով անոր անմիջական
շահը : Այս եռանդին աստիճանը՝ հարկ
համարած է Ներսէս Շնորհալի հայրա-
պետը նշանակել իր ընդհանրականին մէկ
էջին մէջ՝ որ ահաւասիկ .

« Տեսանեմք զբազումս ցամաքեալս յաս-
տուածայն սիրոյն, և ոչ մի քան զմի
նախանձու շարժեալը՝ ի բարձրագոյն ա-
ռաքինութիւնս ձեռնարկելով, որպէս ա-
ռաջին հարցն . այլ մերոյս նախանձ ի
հակառակն բերի նոցա, այսինքն թէ ո՛վ
քան զընկերս յընդարձակագոյն տեղոջ և
ի պարարտ երկրի տնկիցէ այգի, և թէ
զիարդ սնուցանիցէ իմաստութեամբ զնո-
րագոյն տունկն : Եւ փոխանակ զարուեստս
առաքինութեան ուսանելոյ ի միմեանց զայ-
գեգործութեան հնարս վարժին անհմուտն
ի հմտագունիցն : Արժան է, ասն, այս-
պիսի օրինակաւ վաստակել եզամբը, և
բրև ձեռամբ, փայտատօք և բահիւք, և
զհակառակ տնկոցն զարմատս և զոյս ար-
մատարի խլել . . . Այլ և յատանելոյն օ-
րինակ զանազանեալ է իւրաքանչիւր տրն .
կոցն սեռից՝ առ իմաստունս յայնոսիկ .
զի զոմանս հուպ յարմատուն և զայլսն ի
բացեալ հատանն . յոմանս սակաւ զուտն,
և ի կէսս յուղվագոյնս թողուն . և այս
ամենայն որպէս զի յաճախագոյնս պտղա-
բերեցն և յուղուս զգինւոյն չափոյ անե-
ցուցնեն զթիւս թողից ամի զպատուաւ
տեղին հնարս, մի քան զսի առաւելեալ
ի հանճար, և զգործելոյն եռանդն ջեր-
մութեան, զի ոչ զտիւն ոմանք բաւական
համարին ժամանակ գործելոյ, այլ և ըզ-
գիշերն եւս խառնեն ընդ տուրնջեանս . . .

Գարձեալ յորժամ պատահին միմեանց
տեարք այգեաց կրօնաւորք՝ յայլ և այլ
տեղեաց, յետ ողջունին՝ ոչ զողջութենէ
հոգեոց հարցանեն . . . այլ թէ յայսմ ամի,
ո՛վ եղբայր, զիարդ է պտղաբերութիւն
քոյին տնկոցն, առաւել եթէ նուազ : Եւ
նա թախծեալ սրտիւ պատասխանէ . Ձիւնչ
աստարք, ասէ, զաղէտան, որ պատահե-

ցան, զի ոմանք ի ճճեաց փնասեցան, և յու-
մանց ծաղիկըն թօթափեցան, և այլը ա-
բևակէզ եղեալ ողիւզացն, չորացան և
կէսըն նեխութեամբ ապականեցան. և թէ
զինչ արարից անգիտանամ զելս վտանգիս
եղեւոյ: Եւ ընկերն թեւաղիր եղեալ նմին
խրատ տայ զուսանս պատուաստել ի տըն-
կոցն՝ որք պտղակորոյք լինին, և զայլան
զանազան փորձեալ հնարիւք բժշկել ի
պատահելոց կրիցն՝ 1:

Այս էլը յայտնի կը ցուցնէ թէ Գիրք
Վաստակոցը միայն այս միջոցները կրնայ
թարգմանուած ըլլալ. այսինքն է ժ. Բ. դա-
րուն մէջ և ապահովապէս 1160 թուա-
կանէն վերջ: Մեր նախնիք առանց մեծ
պէտք մը զգալու, ինչպէս հոս կը տես-
նուի, կրօնական գրուածներէ դուրս ուրիշ
բանի ձեռք չէին զարներ, մանաւանդ այս-
պիսի գրուածք մը՝ որ ընդհանրապէս հե-
թանոս գրիչներէ շարադրուած, հակառակ
ըրիստոնէից ձեռքով կրճատուած ըլլալուն,
լեցուն է դեռ այնպիսի կտորներով, ուս-
կից կը խորշէին: ինչպէս կը տեսնուի
Շնորհալիի կտորին մէջ, նոյն ժամանակ-
ները մեծ փոյթ ունէին այգեգործութեան,
զինիի և պատուաստելու արուեստը զար-
գացնելու. և Վաստակոց ամբողջ զիրքը,
զրեթէ ամբողջ այս բաներուս վրայ կը
խօսի: Կ'երեւի թէ դիտումսը հայերէնի մէջ
միայն այս մասերը թարգմանուած են,
մինչ բնագիրը աւելի ընդարձակ ծրագիր
մ'ունի, երկրագործական ամէն տեսակ
նիւթի վրայ ճառելով:

Կը կրկիննք դարձեալ թէ այս շրջանիս
ուր միայն կրնայ այս գիրքը թարգմա-
նուած ըլլալ, միայն ալ Միխիթար Հերա-
ցին է, աշխարհական և գրագէտ որ ա-
րարերէն գիտէր: Ձիջած է անշուշտ այս

կրօնաւորներու խնդրանքէ մը՝ թարգմա-
նելու այսպիսի կարեւոր գործ մը՝ ինչպէս
գիջած էր Գրիգոր Տղայ կաթողիկոսի խըն-
դրանքի մը խմբագրելու Ջերմանց Միխ-
թարութիւնը՝ զոր հրատարակեց յամին
1184, յորում Միխիթար Գոշ կը խմբա-
գրէր իր Գատաստանագիրքը:

Վաստակոց գիրքը այս թուականէն յա-
ռանջ հրատարակած է թէ յետոյ: Ըստ իս
հաւանական է թէ յառաջ:

Հ. Կ. ԱՆՈՐԿԵԱՆ



ԱՆՈՒՇԱՅԻ ԿՆԻՓԻ « Իβρωն Καρχηδων »

Փարպեցոյ շնորհիւ, հանրածանօթ զար-
ձած է Աշուշա, Վրաց բղեշիւր²: Իր կնի-
քը, որ հասած է մեզ, հետեւեալ մակա-
գիրը կը գրէ:

Ασουςας πικιαξης Ιβρων Καρχηδων.

Հեղինակաւոր գիտնական մը, Հ. Յ. Գա-
թրճեան, բնագիրը սոյսպէս կ'ուզէ ըն-
թեանուլ .

Ιβρων (Κου)καρχηδ-ων.

Այսու կը ստացուի հետեւեալ թարգմա-
նութիւնը. « Աշուշա բղեաշիս Վրաց Գու-
գարաց »:

Հայ բղեշիներու ուսումնասիրողը, Հան-
դես Ամսորիայի մէջ, հարցական մը կը
նշանակէ, ու տարակոյսի մէջ, կ'անցնի³ .

Հ. Գաթրճեանի տեսութեան կարելի է
առարկել այն՝ որ Աշուշա պատճառ չու-
նէր Գուգարք բառը՝ ԽΑΡΧ (կամ երկրորեալ
Κουκαρχ) բառով բացատրելու, մինչդեռ

1. Շնորհալի. Թուղթ ընդհանուր, տպ. Վենետիկ,
1878, էջ 73-77:

2. Փարպ. տպ. 1891, (էջ 149, 165, 177, 191, 364-
366, և այլն), Կորթնէ, տպ. 1893, էջ 20, խորհեացի,
էջ 364-366, և այլն.

3. 1908, Թիւ 1, Յունուար, էջ 1. — Բագմաճուս
յօդուածագիրը կը սխալե, կարծենք, երբ Խորճղնի ա-

նունը մեկնելու համար՝ զայն ԽՕԼԱՐՇՂՆԻ կը փոխէ և
կը նոյնացնէ կազարթի հետ, մինչ Բուզանդացի ճշգրի-
տակներու մէջ Խորճղնի մըտ « խորճանք » գառառի կը
համապատասխանէ, ինչ որ զրապէս կարելի է ապացու-
ցանել՝ համեմատելով մեր միջնադարեան պատմիչները
յոյն պատմիչներու հետ, երբ սառնք մի և նոյն պատ-
մական եղելութեանց վրայ կը խօսին: